

(աղջկանը դառնալով) աղջի՛կ, քիչ մը ֆրանսերէն խօսքեր չընէ՛ս, մաղամներուն հետ:

Հիւրերէն մին մաղամ բառին վրայ կէս կանգուն վեր կցատկէ նստած տեղէն:

–Բաւական ձեռագործ ալ սորվեցուցի, կը շարունակէ տիկին Թ... պարել ալ գիտէ, եթէ կ'ուզէք. պարեցէք հետը քիչ մը:

–Թող մնայ այսօր, կ'պատասխանէ հիւրերէն մին եւ գրպանէն անդորրագիր մը կը քաշէ, մատիտ մ'ալ հանելով ծոցէն:

–Եթէ ուզէք՝ քիչ մը ֆրանսերէն խօսի...

–Շնորհակալ ենք, խէրը տեսնենք. մենք ալ անոր ուսումնականութեանը վստահելով հոս եկանք, եւ շատ ուրախ ենք, որ մեր յուսացածէն աւելի կրթուած եւ պարկեշտ տեսանք զինքը:

Տիկին Թ... կ'ուրախանայ այս յայտարարութեան վրայ, որ իրեն համար կը նշանակէր, թէ խօս - կապը հետեւեալ օրը պիտի դրկուի:

–Քանի՞ դահեկան գրենք, կը հարցնէ հիւրերէն մին, մատիտն եւ անդորրագիրն ձեռքին մէջ բռնելով:

–Քանի՞ դահեկան...:

–Այո՛, ձեր կարողութեանը համեմատ բանը մը ըսէ՛ք:

–Ատոր խօսքը հօրը հետ պիտի ըլլուի:

–Հայրը ո՞ր գտնենք. դուք գիտէք հարկաւ թէ ինչ կրնաք տալ. ասիկա անանկ բան մ'է, որ ամսէ ամիս պիտի առնուի:

–Ամսէ ամիս ինչո՞ւ առնուի. ասանկ գործի մը ելնողը հարկաւ առաջուց պատրաստած է իւր տալիք ստակը: Բայց ես ալ ձեզի բան մը հարցունեմ:

–Հարցուցէք:

–Այս ստակն որո՞ւ որ պիտի տանք նէ՛ ան ալ գոնէ դրամագլուխ մը ունի՞:

–Ի՞նչ կ'ըսէք, տիկին, հազար ոսկիի մօտ դրամագլուխ ունի այսօր:

–Հազար՞ ոսկի:

–Այո՛:

–Իմ լսածս հազիւ հարիւր ոսկի ունի եղեր:

–Միայլ է տիկին:

–Քանի՞ տարեկան բան է աս, որ հազար ոսկի ունենայ: